Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-05-2022 թ. որոշմամբ
ա«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00146
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-11-24
1.5 ՀՎՀՀ-ն		02554941
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93382009
		+(374)10584032
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.kasa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		kasaam@kasa.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Մոնիկ Բանդոլֆի Մասրաֆ		
Դարիո Բոնդոլֆի		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Մոնիկ Բանդոլֆի Մասրաֆ		
Դարիո Բոնդոլֆի		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Տաթևիկ Բաղդասարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	42	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	«Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ, երիտասարդների հզորացում քաղաքացիական կրթության և սոցիալական նորարարության միջոցով» ծրագիր	158,600
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հիմնադրամի գործունեության աջակցման ծրագիր	226,958,200

	«Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ» ծրագիր	35,303,226
	ՄԱԿ-ի ԹԵԺ գիծ ծրագիր	15,535,279
	Հիրշման կրթաթոշակների ծրագիր	23,803,943
	Եվրոպական կամավորական ծառայություն	11,226,596
	Կրթապիտակների ծրագիր	10,341,747
	Արև ծրագիր	8,073,000
	Արև ծրագիր	7,500,000
	Նորարարական տուրիզմի զարգացումը Հայաստանում	8,108,779
	Ապագան այսօր ծրագիր	12,272,095
	Կենսակայուն զարգացման ծրագիր	3,589,454
	Պատերազմից տուժած բնակչությանը օգնություն	7,894,962
	Պատերազմից տուժած բնակչությանը օգնություն	4,824,351
	Պատերազմից տուժած բնակչությանը օգնություն	4,044,103
	Արցախի երեխաներին օգնություն	587,327
	Գյումրիի ընտանիքներին օգնություն	1,500,000
	Արև ծրագիր	7,617,212
	«Սոցիալ-ուսուցողական ծրագիր երեխաների և դեռահասների համար»	5,727,303
	Տուրիզմի զարգացման ծրագիր զբոսավարներ	1,422,879
	Տուրիզմի զարգացման ծրագիր	470,761
	Փոխառության վերադարձ	10,000,000
	Ավանդի տոկոս	1,726,918
	Տարածքի վարձակալություն	7,205,000
	Տարածքի վարձակալություն	1,875,000
	Տարածքի վարձակալություն	1,774,000
	Տարածքի վարձակալություն	540,000
	Խորհրդատվություն	3,960,000
	Մուդլ հարթակի վրա առցանց մեկ դասընթացի ստեղծում	3,100,000
	Վերելք եւ աճ ծրագրի MOOC էլ. կրթության հարթակի ստեղծման համար	1,700,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Պատերազմից տուժած բնակչությանը օգնություն	1,110,000
	Նվիրատվություն	393,000
	Նվիրատվություն	175,824
	Նվիրատվություն	620,000
	Նվիրատվություն	1,200,000
	Նվիրատվություն	411,700
	Նվիրատվություն	93,591
	Նվիրատվություն	10,512
	Զբոսավարների պատրաստման դասընթաց	1,100,100
	Աշխատանքային հմտությունների զարգացման դասընթաց	170,000
	Երեխաների և դեռահասների զարգացման դասընթաց	516,600

	Կրթական խաղերի վաճառք	439,194
	Այլ	10,006
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Բնակարան	7,571,446
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ ծրագիր	62,725,859	
ՄԱԿ-ի ԹԵԺ գիծ ծրագիր	15,321,307	
Գյումրի և Երևան քաղաքներում անապահով ընտանիքներին օգնությունների տրամադրման ծրագիր	24,441,380	
Կենսակայուն զարգացման ուսուցում ծրագիր	2,977,958	
Հեռահար կրթության ծրագիրը	13,302,705	
Սոցիալ-ուսուցողական ծրագիր երեխաների և դեռահասների համար	14,101,965	
Եվրոպական կամավորական ծառայություն ծրագիր	4,001,592	
Զբոսաշրջության զարգացման ծրագիր	8,680,899	
Ուժեղ Արցախ ծրագիր	13,380,721	
Ֆրանկոֆոնիան Հայաստանում ծրագիր	5,448,036	
Ուսանողների ուսման վարձերի տրամադրում	3,215,440	
Դրամաշնորհ «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի անապահով երեխաներին կրթաթոշակ տրամադրելու նպատակով	840,000	
Կրթապիտակների ծրագիր	6,727,923	
Սոցիալ հոգեբանական աջակցություն Գյումրու խոցելի ընտանիքներին ծրագիր	3,230,000	
Սոցիալական ձեռներեցության ծրագիր	12,719,340	
Վերապատրաստման ծրագիր	5,280,024	
Գյուղատնտեսական ծրագիր	1,320,000	
Հիրշման կրթաթոշակների ծրագիր	16,687,126	
Ապագան այսօր ծրագիր	14,425,170	
Նորարարական տուրիզմի և տեխ.զարգացում Հայաստանի համար ծրագիր	8,108,779	

Ճանապարհի դեպի աշխատանք ծրագիր	7,943,064
Աշխատանքային հմտությունների զարգացման ծրագիր	5,495,390
ԱՐև ծրագիր	16,452,337
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	310,456,673
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	266,827,015

Նշումներ՝

Հիմնադրամի վարչական և պահպանման ծախսերը կազմել են 43 629 658 ՀՀ դրամ, որից 32 128 864 վարչական ծախսեր, 11 500 794՝ պահպանման ծախսեր: Հիմնադրամը ունի մեկ դուստր կազմակերպություն՝ «ՍոցՁեռ» ՍՊԸ (100% բաժնեմասով, 1,000 հազար դրամ կանոնադրական կապիտալով, ստեղծված 2019թ փետրվարին): Աուդիտորական եզրակացությունը և համախմբված ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են Հիմնադրամի և իր դուստր կազմակերպության ընդհանուր տվյալները: Տվյալ հաշվետվությունը ընդգրկում է միայն Հիմնադրամի գործունեության տվյալները:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 29 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by TAGVORYAN HRIPSIME 6902620148
Date: 2022.06.24 12:40:58 AMT

«ԿԱԶԱ»

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՀՀ, Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ.՝ (374 60) 60 70 80; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի և վերջինիս դուստր կազմակերպության (այսուհետ՝ Խումբ) կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2021թ., այդ այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ□ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն ՓՄԿ-ների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ի վրա, որտեղ ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը.
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

Էդգար Ալեքսանյան
Առաջադրանքի ղեկավար

20 մայիսի, 2022թ.,
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	*Ծանոթ.*	*31/12/21*	*31/12/20*
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	6	518,598	524,486
Ոչ նյութական ակտիվներ		647	8
Հետաձգված հարկային ակտիվներ	15	592	628
Ոչ ընթացիկ նյութեր		4,202	234
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*524,039*	*525,356*
Պաշարներ	7	6,941	6,098
Կանխավճարներ ծառայությունների համար		5,842	5,580
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8	4,069	2,856
Ընթացիկ հարկային ակտիվներ		59	785
Դրամական միջոցներ	9	173,837	54,916
Այլ ընթացիկ ակտիվներ		15,060	6,265
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*205,808*	*76,500*
Ընդամենը ակտիվներ		*729,847*	*601,856*
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	10	1,616	1,616
Չբաշխված շահույթ	10	135,304	130,114
Ընդամենը սեփական կապիտալ		*136,920*	*131,730*
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	383,241	388,655
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*383,241*	*388,655*
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	12	4,647	1,458
Կանխավճարներ ծառայությունների համար		406	6,159
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային պարտավորություն		532	330
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ		2,954	1,934
Աշխ.-ի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություններ		3,431	3,567
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	197,716	68,023
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*209,686*	*81,471*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		*729,847*	*601,856*

Տնօրեն Տաթևիկ Բաղդասարյան

Գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Թազվորյան

«ՀԱԶԱ» «KASA» 02554944

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ.*	*2021*	*2020*
Հասույթ	13	41,135	10,468
Վաճառքի ինքնարժեք	13	(22,207)	(22,101)
Համախառն շահույթ (վնաս)		***18,928***	***(11,633)***
Դրամաշնորհներից եկամուտ	11	286,690	219,943
Դրամաշնորհներից ծախս	11	(248,348)	(181,037)
Իրացման ծախսեր		(217)	(86)
Վարչական ծախսեր		(52,093)	(48,381)
Այլ եկամուտներ/ծախսեր	14	3,952	3,782
Գործառնական շահույթ (վնաս)		***8,912***	***(17,412)***
Ֆինանսական եկամուտ		3,286	4,037
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(6,440)	1,083
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		***5,758***	***(12,292)***
Շահութահարկի գծով ծախս	15	(568)	(562)
Զուտ շահույթ (վնաս)		***5,190***	***(12,854)***

Տնօրեն — Տաթևիկ Բաղդասարյան

Գլխավոր հաշվապահ — Հռիփսիմե Թագվորյան

«ԿԱԶԱ»
«KASA»
02554941

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ*	*Կանոնադրական կապիտալ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ	10	1,616	142,968	144,584
Զուտ շահույթ (վնաս)		-	(12,854)	(12,854)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ		1,616	130,114	131,730
Զուտ շահույթ (վնաս)		-	5,190	5,190
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.		1,616	135,304	136,920

Տնօրեն Տաթևիկ Բաղդասարյան

Գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Թազվորյան

«ԿԱԶԱ»
«KASA»
02554941

'000 դրամ	*Ծանոթ.*	*2021*	*2020*
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	13	21,842	14,643
ստացված դրամաշնորհներից	11	407,284	196,120
վարձակալությունից		9,084	5,721
այլ ներհոսքեր		10	163
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից		(94,712)	(57,081)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից		(150,342)	(134,023)
շահութահարկի վճարումից	15	(1,188)	(2,119)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից		(613)	(402)
այլ արտահոսքեր		(56,233)	(39,900)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		*135,132*	*(16,878)*
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
տոկոսների ստացումից		1,727	3,241
հիմնական միջոցների ձեռքբերումից	6	(11,521)	(486)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր		*(9,794)*	*2,755*
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		125,338	(14,123)
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		(6,417)	1,084
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		54,916	67,955
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		173,837	54,916

Տնօրեն — Տաթևիկ Բաղդասարյան

Գլխավոր հաշվապահ — Հռիփսիմե Թազվորյան

«ԿԱՋԱ» «KASA» 02554941

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2001թ. հունիսի 11-ին, Շվեյցարիայի բարերարների միջոցներով և ջանքերով: Այն որպես հիմնադրամ գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարի N 149 հրամանով և վերագրանցվել է 25.07.2003թ-ին:

Հիմնադրամը ունի մեկ դուստր կազմակերպություն՝ «ՍոցՁեռ» ՍՊԸ (100% բաժնեմասով, 1,000 հազար դրամ կանոնադրական կապիտալով, ստեղծված 2019թ. փետրվարին), չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են Հիմնադրամը և իր դուստր կազմակերպությունը (այսուհետ՝ Խումբ):

Հիմնադրամի հիմնական ֆինանսավորումն իրականացվում է Շվեյցարիայից՝ տարբեր հիմնադրամների կողմից հատկացվող դրամաշնորհների ձևով:

Հիմնադրամի նպատակն է նպաստել.

- սոցիալապես անապահով բնակչության սոցիալական ապահովության իրականացմանը,
- մշակութային և կրթական տարբեր գործունեությունների ծավալմանը,
- սոցիալական, առողջապահական, հոգեբանական, բնապահպանական տարբեր ծրագրերի իրականացմանը և այլն:

Դուստր ընկերության գործունեության նպատակը տուրիզմի, հյուրանոցային սպասարկման և կրթության ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 2021թ. 42 անձ է և 2020թ.՝ 46:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Թումանյան փ.24 շենք, բն.5, որտեղ տեղակայված է Հիմնադրամի վարչական գրասենյակը:

1.2. Կառուցվածք և կառավարում

Հիմնադրամի հիմնադիրներն են.

- Մոնիկ Բոնդոլֆի-Մասրաֆը (Շվեյցարիա),
- Դարիո Բոնդոլֆին (Շվեյցարիա),
- Սիրվարդ Կազանչյան-Պիրսոնը (Շվեյցարիա):

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որն ունի Հիմնադրամի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները հինգն են՝

- Մոնիկ Բոնդոլֆի-Մասրաֆը (Շվեյցարիա),
- Դարիո Բոնդոլֆին (Շվեյցարիա),
- Անահիտ Մինասյան (Հայաստան),
- Միշել Մենի (Ֆրանսիա),
- Վերոնիկ Ժիրարդե (Շվեյցարիա):

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Հիմնադրամի տնօրենը իրականացնում է ընթացիկ գործառույթներ և հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված այլ լիազորություններ:

2. ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Խմբի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:
Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1.Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝
ա) ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.
բ) ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Խումբը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.
գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.
դ) դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.
Համախմբված ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Խումբը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

4.3. Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների շրջանակը

Հիմնադրամը համախմբում է բոլոր դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք գործում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում:
Դուստր է այն կազմակերպությունը, որը վերահսկվում է Հիմնադրամի կողմից: Հիմնադրամը վերահսկողություն ունի ներդրման օբյեկտի (դուստր կազմակերպության) նկատմամբ, երբ ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում նա ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:

Համախմբման ընթացակարգերը

Խումբը պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ միանման գործարքների և նույն հանգամանքներում տեղի ունեցող այլ դեպքերի համար օգտագործելով հաշվապահական հաշվառման միօրինակ քաղաքականություն:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է նրա նկատմամբ Հիմնադրամի (մայր կազմակերպության) կողմից վերահսկողություն ձեռք բերելու ամսաթվից և դադարում է՝ ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի (մայր կազմակերպության) վերահսկողությունը կորցնելուն պես: Դուստր կազմակերպության եկամուտներն ու ծախսերը հիմնված են լինում ակտիվների և պարտավորությունների՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա:

Չվերահսկող բաժնեմասերը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են սեփական կապիտալում՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Հիմնադրամի և դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են տող առ տող՝ գումարելով ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի համապատասխան հոդվածները:

Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն խմբի, որպես մեկ կազմակերպության համար, կատարվում են հետևյալ քայլերը՝

ա) համախմբվում են մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները.

բ) հաշվանցվում է (բացառվում է) յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը.

գ) ամբողջությամբ բացառվում են ներխմբային ակտիվները և պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք վերաբերում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին (ներխմբային գործարքներից առաջացող շահույթը կամ վնասը, որը ճանաչվել է ակտիվներում, օրինակ, պաշարներում և հիմնական միջոցներում, բացառվում է ամբողջությամբ):

4.4.Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Խումբը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը): Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախարտադրական ծախսումները հիմնական միջոց-

ների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) Խմբի կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Խումբը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Դասի անվանումը	*Օգտակար ծառայությունը*
Շենքեր	60-80 տարի
Կառուցվածքներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-8 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Այլ հիմնական միջոցներ	5-8 տարի

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայությունը սահմանվում է 1 տարի:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հետագա ծախսումները

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

4.5. Ակտիվների արժեզրկում

Սույն պարագրաֆի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին:

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Խումբը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գուդվիլի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

4.6. Պաշարներ

Սկզբնական չափում

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Խմբին ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները վերամշակման ծախսումների վրա բաշխվում են՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից: Յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը չի ավելանում ցածր արտադրողականության կամ արտադրության պարապուրդի հետևանքով: Չբաշխված վերադիր ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում: Արտադրության ծավալների անսովոր բարձր լինելու ժամանակաշրջաններում յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը նվազեցվում է այնպես, որ պաշարները չչափվեն ինքնարժեքից բարձր:

Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվում են արտադրական հզորությունների փաստացի օգտագործման հիման վրա:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:
Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝
ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերածախսի հետ.
բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.
գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.
դ) վաճառքի ծախսումները:
Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:
Պաշարների ինքնարժեքում փոխառության ծախսումների՝ կապիտալացման մոտեցումները ներկայացված են համապատասխան բաժնում:

<u>Ինքնարժեքի չափման մեխանիզմները</u>

Պաշարների ինքնարժեքի չափման մեխանիզմները՝ ստանդարտ ծախսումների մեթոդը կամ մանրածախ մեթոդը, կարող են օգտագործվել նպատակահարմարությունից ելնելով, եթե արդյունքները մոտավորապես հավասար են ինքնարժեքին:
Ստանդարտ ծախսումները հաշվի են առնում հումքի և նյութերի, աշխատուժի, արդյունավետության և հզորության նորմալ մակարդակը: Դրանք պարբերաբար վերլուծվում են և, անհրաժեշտության դեպքում, վերանայվում են՝ արդի պայմաններից ելնելով:

<u>Ինքնարժեքի բանաձևեր</u>

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:
Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք՝ առաջին ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

<u>Հետագա չափում</u>

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:
Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:
Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման զուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը:
Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:
Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

4.7.Ֆինանսական ակտիվներ

<u>*Ճանաչում*</u>

Խումբը ֆինանսական ակտիվը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

<u>*Ապաճանաչում*</u>

Խումբը ֆինանսական ակտիվը ապաճանաչում է, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Խմբի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

4.8. Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Խումբը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Խումբը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Դասակարգում

Ֆինանսական պարտավորության կատեգորիաներն են՝

- ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- այլ ֆինանսական պարտավորություններ:

4.9. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, Խումբը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Խումբը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Խումբը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Խումբը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

4.10. Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում: Որպես վարձակալ, գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

4.11. Հասույթ

Չափում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Սովորաբար հատուցումը ունի դրամական միջոցների կամ դրամական միջոցների համարժեքի տեսք, իսկ հասույթը՝ ստացված կամ ստացվելիք դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է:

Երբ պայմանավորվածության արդյունքում գործարքը վերածվում է ֆինանսականի, հատուցման իրական արժեքը որոշվում է բոլոր ապագա վճարումների զեղչման հիման վրա՝ կիրառելով պայմանական տոկոսադրույքը: Պայմանական տոկոսադրույքն ավելի հստակ որոշվում է՝

ա) նման վարկունակություն ունեցող թողարկողի նմանատիպ ֆինանսական գործիքի համար գերակշռող դրույքաչափով, կամ՝

բ) տոկոսադրույքով, որը զեղչում է ֆինանսական գործիքի անվանական գումարը՝ այն հասցնելով ապրանքների կամ ծառայությունների ընթացիկ վաճառքի գնին:

Իրական արժեքի և հատուցման անվանական գումարի տարբերությունը ճանաչվում է տոկոսային հասույթ:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Խումբը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Խումբը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Սովորաբար սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը գնորդին համընկնում է սեփականության իրավունքի կամ տիրապետման իրավունքի փոխանցման հետ:

Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Տոկոսներ

Տոկոսները ճանաչվում են, երբ՝

ա) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ.

բ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթների գումարը:

Տոկոսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

4.12. Շնորհներ

Ճանաչում

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Չափում

Շնորհները չափվում են ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

4.13. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Խումբը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են), և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Խմբի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	31.12.2021	*31.12.2020*
	ՀՀ դրամ	*ՀՀ դրամ*
1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
1 Եվրո	542.61	641.11
1 Շվեյցարական ֆրանկ	523.14	590.83

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

4.14. Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Խումբը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Խումբը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ծանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

(ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

(բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Խումբը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հաշվելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում

Խումբը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Խումբը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

4.15. Սխալներ

Խումբը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4.16. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

4.17. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Խումբը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Խմբի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Խումբը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի:

Երբ Խմբի համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Խումբը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Խումբը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

4.18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Խումբը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Խումբը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

6. Հիմնական միջոցներ

'000 դրամ	Շենքեր	Կառուց-վածքներ	Փոխանցող հարմա-րանքներ	Մեքենաներ և սարքա-վորումներ	Արտադրա-կան գույք, տնտեսա-կան գույք, գործիքներ	Հողա-մասեր	Ընդա-մենը
Սկզբնական արժեք							
31 դեկտեմբեր 2019թ.	551,721	38,786	7,042	43,626	73,711	19,927	734,813
Ավելացում	-	-	-	407	339	-	746
Դուրս գրում	-	-	-	(750)	(1,236)	-	(1,986)
31 դեկտեմբեր 2020թ.	551,721	38,786	7,042	43,283	72,814	19,927	733,573
Ավելացում	7,571	-	-	8,191	2,172	-	17,934
Դուրս գրում	-	-	-	(654)	(324)	-	(978)
31 դեկտեմբեր 2021թ.	559,292	38,786	7,042	50,820	74,662	19,927	750,529
Կուտակված մաշվածություն							
31 դեկտեմբեր 2019թ.	76,381	25,534	4,636	33,581	47,153	-	187,285
Տարեկան մաշվածություն	9,650	1,940	352	3,913	7,830	-	23,685
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-	(750)	(1,132)	-	(1,882)
31 դեկտեմբեր 2020թ.	86,031	27,474	4,988	36,744	53,851	-	209,088
Տարեկան մաշվածություն	9,714	1,939	352	3,906	7,883	-	23,794
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-	(643)	(308)	-	(951)
31 դեկտեմբեր 2021թ.	95,745	29,413	5,340	40,007	61,426	-	231,931
Հաշվեկշռային արժեք							
31 դեկտեմբեր 2019թ.	475,340	13,252	2,406	10,045	26,558	19,927	547,528
31 դեկտեմբեր 2020թ.	465,690	11,312	2,054	6,539	18,963	19,927	524,486
31 դեկտեմբեր 2021թ.	463,547	9,373	1,702	10,813	13,236	19,927	518,598

Մաշվածություն

'000 դրամ	2021	2020
Ընդամենը, այդ թվում՝	23,794	23,685
- ծրագրային նշանակության	22,211	21,907
- վարչական նշանակության	1,468	1,679
- արտադրական նշանակության	115	99

Այլ

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշվածությունը հաշվարկված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2021թ. դրությամբ կազմում է 59,674 հազար դրամ (31.12.2020թ-ին՝ 59,375 հազար դրամ):

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային պարտավորություններ չկան:

Հաշվետու տարում վերագնահատումներ և ներստեղծման ծախսումներ չեն կատարվել:

Ժամանակավոր պարապուրդի մեջ գտնվող հիմնական միջոցներ չկան:

7. Պաշարներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ*	*Մնացորդ 31.12.2020թ*
Ընդամենը, այդ թվում՝	6,941	6,098
- նյութեր	2,543	878
- պատրաստի արտադրանք	3,938	3,522
- ապրանքներ	460	1,698

«Արտադրանք» հոդվածում հաշվառվել են «Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի իրականացման նպատակով ստեղծված և վաճառքի ենթակա խաղերը/քարտեր-ուղեցույցներ/:

«Ապրանքներ» հոդվածում հաշվառվել են դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով ձեռքբերված, վաճառքի ենթակա և անհատույց տրամադրվող ակտիվները:

8. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Ընդամենը, այդ թվում՝	4,069	2,856
- ծառայությունների գծով	430	112
- գործառնական վարձակալության գծով	1,240	865
- տոկոսներից եկամուտների գծով	2,355	796
- դրամաշնորհային ծրագրերի գծով	-	1,056

9. Դրամական միջոցներ

	Մնացորդ 31.12.2021թ.				*Մնացորդ 31.12.2020թ.*			
	Շվեյց. ֆրանկ	*Եվրո*	*ԱՄՆ դոլար*	*'000 դրամ*	*Շվեյց. ֆրանկ*	*Եվրո*	*ԱՄՆ դոլար*	*'000 դրամ*
Ընդամենը, այդ թվում՝	-	120	141,074.47	173,837	900	7,855	230	54,916
- դրամարկղում	-	-	-	108	-	-	-	411
- բանկում՝ արժույթով	-	-	-	105,928	-	-	-	48,827
- բանկում՝ արտարժույթով	-	120	141,074.47	67,801	900	7,855	230	5,678

Որպես դրամական միջոցի համարժեք տարեսկզբին ավանդագրված 27,000 հազար դրամ գումարը հաշվետու տարում մարվել է, որից հաշվետու տարում ստացվել են 931 հազար դրամ տոկոսային եկամուտներ: Տարեվերջին ավանդագրվել է 80,000 հազար դրամ, որից հաշվետու տարում ստացվել են 2,355 հազար դրամ տոկոսային եկամուտներ:

10. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը ներառում է.

- Հիմնադրամի գործունեության սկզբնական միջոցները (հիմնադիրների կողմից ստեղծման պահին հիմնադրամին փոխանցված նյութական և ֆինանսական միջոցները)՝ 1,616 հազար դրամ,
- չբաշխված շահույթի տարեվերջի մնացորդը 135,304 հազար դրամ:
- հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 5,190 հազար դրամ:

11. Շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2019թ*	*Ավելացում*	*Նվազեցում*	*Մնացորդ 31.12.2020թ*	*Ավելացում*	*Նվազեցում*	*Մնացորդ 31.12.2021թ*
Ընդամենը, այդ թվում	478,791	197,830	(219,943)	456,678	410,969	(286,690)	580,957
-ակտիվներին վերաբերող շնորհներ	411,793	568	(23,706)	388,655	18,543	(23,957)	383,241
-եկամուտներին վերաբերող շնորհներ	66,998	197,262	(196,237)	68,023	392,426	(262,733)	197,716

Ակտիվներին վերաբերող շնոհների

- ավելացումը՝ հիմնականում «Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» ԲՄ-ի կողմից ստացված ակտիվներին վերաբերող շնորհներն են,
- նվազեցումը՝ ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչումն է (հաշվարկված մաշվածության չափով):

Եկամուտներին վերաբերող շնորհների

- ավելացումը՝ եկամուտներին վերաբերող շնորհներն են ստացված «Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» ԲՄ-ի, ՄԱԿ-ի փախստականների ծրագրի, Միավորված ազգերի զարգացման ծրագրի, Արեգ բարեգործական հիմնադրամի, Գերմանիայի միջազգային համագործակցության և այլ դրամաշնորհատուների կողմից,
- նվազեցումը՝ եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչումն է (կատարված ծախսերի չափով) և ուսման վարձերի մարումը:

12. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Ընդամենը, այդ թվում՝	4,647	1,458
- նյութերի գծով	162	129
- ծառայությունների գծով	2,245	802
- ապահովագրավճարների գծով	1,243	527
- ԴԱՀԿ-ի պարտավորությունների գծով	997	-

Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

13. Վաճառքներ

Հաշվետու տարում Խումբն իրականացրել (մատուցել) է համակարգչային, հայոց և օտար լեզվի, զբոսավարների պատրաստման, աշխատանքային հմտությունների զարգացման և այլ ուսուցման դասընթացներ, ինչպես նաև տուրիզմի և հյուրանոցային սպասարկման ծառայություններ:

'000 դրամ	2021			2020		
	Հասույթ	Ինքնարժեք	Շահույթ	Հասույթ	Ինքնարժեք	Շահույթ
Ընդամենը, այդ թվում՝	41,135	(22,207)	18,928	10,468	(22,101)	(11,633)
- ծառայությունների մատուցումից	40,657	(21,871)	18,786	10,256	(21,924)	(11,668)
- ծառայությունների մատուցումից	478	(336)	142	212	(177)	35

14. Այլ եկամուտներ (ծախսեր)

'000 դրամ	2021	2020
Այլ եկամուտներ (ծախսեր) ընդամենը, այդ թվում՝	3,952	3,782
- գործառնական վարձակալությունից եկամուտ	4,919	3,626
- այլ եկամուտ	84	-
- հիմնական միջոցների օտարումից (դուրսգրումից) ծախս	(27)	(104)
- տույժերից, տուգանքներից	(4)	(7)
- այլ ծախսեր	(1,020)	(343)

15. Շահութահարկ

'000 դրամ	2021	2020
- շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝	(568)	(562)
○ ընթացիկ հարկի գծով	(532)	(353)
○ հետաձգված հարկի գծով	(36)	(209)

'000 դրամ *Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում*	2021	2020
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթը մինչև հարկումը	5,758	(12,292)
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	(2,803)	14,253
Հարկվող շահույթը	2,955	1,961
Ընթացիկ հարկ	532	353
Հարկի գործող միջին դրույքը	9.24	-

Հետաձգված հարկային ակտիվ

'000 դրամ	31.12.2021		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	(+) Հարկվող ժամանակվոր տարբերություն (-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն
Աշխատավարձի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություն	3,431	139	(3,292)
Ընդամենը			(3,292)

Հետաձգված հարկային ակտիվ	592

'000 դրամ	31.12.2020		
	Հաշվե-կշռային արժեք	Հարկային բազա	(+) Հարկվող ժամանակվոր տարբերություն (-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն
Աշխատավարձի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություն	3,567	77	(3,490)
Ընդամենը			(3,490)
Հետաձգված հարկային ակտիվ			628

«Աշխատավարձի և այլ կաճրաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:
Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

16. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի դասակարգումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

'000 դրամ	Ծանոթ.	2021	2020
Հասույթ	13	41,135	10,468
Դրամաշնորհներից եկամուտ	11	286,690	219,943
Այլ եկամուտներ	14	3,952	3,782
Օգտագործված հումք և նյութեր		(3,995)	(6,195)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(146,088)	(134,306)
ՀՄ-ների մաշվածություն		(23,794)	(23,685)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		(59)	(37)
Գործառնական այլ ծախսեր		(148,929)	(87,382)
Գործառնական շահույթ (վնաս)		*8,912*	*(17,412)*
Ֆինանսական եկամուտ		3,286	4,037
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(6,440)	1,083
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		*5,758*	*(12,292)*
Շահութահարկի գծով ծախս	15	(568)	(562)
Զուտ շահույթ (վնաս)		*5,190*	*(12,854)*

17. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական պարտավորությունների հիմնական նպատակն է Խմբի գործառնությունների ֆինանսավորումը: Խումբը ունի առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ, որոնք առաջանում են գործառնական գործունեության ընթացքում:

Պարտքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) և ներդրումային գործունեության (ավանդներ) հետ:

Պարտքերի համար ապահովություն չի պահանջվում: Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Խումբը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Խումբը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:

Շուկայական ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժութային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են գնումների գծով կրեդիտորական պարտքերը, դեբիտորական պարտքերը և դրամական միջոցները:

Արժութային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Խմբի արտարժույթով գնանշված ֆինանսական գործիքները միայն դրամական միջոցներն են, որոնք ստացվում են դրամաշնորհներից.

Հոդված	*CHF*		*USD*		*EUR*	
	2021	*2020*	*2021*	*2020*	*2021*	*2020*
Ընթացիկ ակտիվներ						
Դրամական միջոցներ	-	900	141,074.47	230	120	7,855
Զուտ հաշվեկշիռ	-	*900*	*141,074.47*	*230*	*120*	*7,855*

Տոկոսադրույքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են ներդրված ավանդների վրա՝ փոփոխելով կամ նրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիք):

Ներդրված ավանդները (դրամական միջոցի համարժեքներ) ֆիքսված տոկոսադրույքով են:

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

18. Կապակցված կողմերի բացահայտումներ

Կապակցված կողմերի փոխհարաբերությունների բնույթը

Անվանումը	Բնույթը
Հիմնադրվել է Հիմնադրամի հիմնադիրների կողմից	«Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» ԲՄ
Դուստր կազմակերպություն	«ՍոցՁեռ» ՍՊԸ՝ 100% բաժնեմասով

Կապակցված կողմերի հետ գործարքներ

Հիմնադրամի կապակցված կողմ է հանդիսանում «Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» ԲՄ-ը, որը հիմնադրվել է Հիմնադրամի հիմնադիրների կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը իրականացրել է «Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» ԲՄ-ի հետ դրամաշնորհային ծրագրեր՝ ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհների տեսքով, որոնք մասնավորապես բացահայտվել են սույն հաշվետվության 11 ծանոթագրությունում:

Դուստր կազմակերպություն

'000 դրամ	*Դեբ. պարտքեր գործառնական վարձակալության գծով*	*Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր*	*Առևտրական կրեդիտորական պարտքեր*	*Տրված կանխավճարներ*	*Տրված փոխառություն*
Մնացորդ 31.12.2020թ.	-	-	-	1,000	10,000
Ավելացում	7,860	4,320	10,152	5,000	5,000
Նվազեցում	7,205	3,960	10,152	6,000	10,000
Մնացորդ 31.12.2021թ.	655	360	-	-	5,000

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2021թ. կազմել է 31,497 հազար դրամ և 2020թ.՝ 29,888 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

19. Պայմանականություններ

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Խումբը իրականացրել է աշխատակիցների առողջության ապահովագրություն:

Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

2021թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ, ինչպես նաև, մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը, Խմբի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Երաշխիքներ

Չկան Խմբի կողմից տրամադրված և (կամ) ստացված երաշխիքներ:

20. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ□ փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը հանգեցրել է և շարունակում է հանգեցնել զգալի զոհերի, բնակչության տեղահանման, ենթակառուցվածքների վնասման և Ուկրաինայում տնտեսական գործունեության խաթարման:

Ի պատասխան՝ բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ ԵՄ-ն, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան և Ավստրալիան, տնտեսական պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի (և որոշ դեպքերում՝ Բելառուսի) նկատմամբ:

Բացի պատժամիջոցների սահմանումից, մեծ թվով խոշոր պետական և մասնավոր կազմակերպություններ հայտարարել են կամավոր գործողությունների մասին՝ Ռուսաստանի և Բելառուսի հետ բիզնես գործունեությունը սահմանափակելու համար: Այս գործողությունները ներառում են Ռուսաստանում/Բելառուսում ակտիվների օտարման կամ գործունեությունը դադարեցնելու պլաններ, այս երկրներ արտահանման կամ ներմուծման կրճատում և ծառայությունների մատուցման դադարեցում:

Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և դրա հետ կապված իրադարձությունները տեղի են ունենում գլոբալ տնտեսական զգալի անորոշության և անկայունության ժամանակաշրջանում, և հետևանքները, ամենայն հավանականությամբ, կազդեն և կվատթարացնեն ընթացիկ շուկայական պայմանները:

Համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերոնշյալ հանգամանքների ունեցած բացասական ազդեցության հետևանքները անուղղակիորեն կարող են որոշակի ազդեցություն ունենալ նաև Կազմակերպության գործունեության վրա: Վերոնշյալ հանգամանքների ամբողջական ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա գնահատել հնարավոր չէ, այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքներն էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսավորման, ինչպես նաև ընթացիկ գործունեության և ծրագրերի իրականացման վրա:

Ճշգրտող այլ դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2021թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (20.05.2022թ.) ընկած ժամանակահատվածում:

21. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2022թ. մայիսի 20-ին՝ տնօրեն Տաթևիկ Բաղդասարյանի և գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Թագվորյանի կողմից:

Տնօրեն	Տաթևիկ Բաղդասարյան
Գլխավոր հաշվապահ	Հռիփսիմե Թագվորյան

«ԿԱԶԱ»
«KASA»
02554941

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.06.2022 15:43